

## ԷԶՄԻԱԾԻՆ

*Հայաստանի մէջ՝ Քրիստոնէութիւնը  
որպէս պետական կրօնէ հռչակման  
1700 ամեակին առթիւ*

Լոյս ծագեցաւ հայաստանեայց կողմ աշխարհի,  
Հայոց աշխարհին դարձաւ խորան Քրիստոսի,  
Յաւերժութեան շողերու շէջ Աստուած իջաւ՝  
Հայաստանեայց Եկեղեցին հաստատուեցաւ:

Աստուածային զարմանահրաշ լոյս յայտնութիւն,  
Քրիստոսի իջման սեղան՝ Էջմիածին,  
Սրբազնագոյն խորհրդատր վեհ պատարագ՝  
Կենդանի խաչ՝ հըրաշքի խօսք Էջմիածին:

Էջմիածնի «Լոյսըն փառաց» որ խօսեցաւ,  
Համայն մարդկանց սիրոյ մասին ու փրկութեան,  
Լուսատրչի հըրաշափառ երկնի տեսիլք՝  
Քրիստոսի ձեռամբ կերտուած Էջմիածին:

Լուսակոթող անմահութեան ըշտեմարան,  
Խունկ ու աղօթք ճառագայթող Էջմիածին,  
Շնորհազարդ հայրապետացն վեհարան  
Համայն հայոց Մայր Աթոռն ես, Է՛ջմիածին:

Դուն պանծալի Աստուծակերտ աղօթարան՝  
Հաւատքի վե՛մ յոյսի աղբիւր Էջմիածին,  
Հայ հոգիին կեանք ճաճանչող մկրտարան՝  
Մեր նոր ուխտի կտակարան Էջմիածին:

Զանգակներուդ ղօղանջին մէջ՝ շարականներ.  
Զաւակներուդ ուխտի ճամբայ, Էջմիածին.  
Մեր մեծ դատի երդմնառու աղօթագիրք,  
Յաղթանակի անշէջ կրակ Էջմիածին:

Ազատութեան ու ազգային խոր հաւատքի՝  
Դու ոսկեգիր աւետարան էջմիածին,  
Դուն ըստեղծիչ անկախութեան քաջ ոգիին՝  
Գաղափարի ուսումնարան էջմիածին:

Դուն կամրջող ջինջ ծիածան՝ համայն հայոց  
Աշխարհասփիռ տարագըրեալ զաւակներուդ,  
Դուն ազգային գիտակցութեան մտքի դարբնոց՝  
Մշտադալար աստղափթիթ էջմիածին:

Աստուածաշունչ քու պատգամներդ սերունդներուն  
Եղան ոգի ու կամք անյաղթ, է՛ջմիածին.  
Դուն հայ ցեղի արեան կանչի հաղորդարան՝  
Մեր նոր երթի յաւերժ տեսիլ էջմիածին:

Դարեր կու գան, դարեր կ'անցնին, է՛ջմիածին,  
Դուն կը մնաս «Խորհուրդ Խորին», ԷՁՄԻԱԾԻՆ:

ԶԱԻԷՆ Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Աթէնք, 1998